ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2009թ N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N895 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի սեպտեմբերի 24-ի ՝Լիցենզավորման մասին՞ Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին՞ N895 որոշման՝

1) ամբողջ տեքստից հանել՝և էկոնոմիկայի՞ բառերը,

2) 1-ին կետի՝ժե)՞ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

՝ժե) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ աղյուսակի 14-րդ բաժնի 1-ին, 17.1-ին բաժնի 1-ին և 2-րդ, 18-րդ բաժնի 11-րդ կետերով.՞:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հարպարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 895 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է պարզ ընթացակարգով լիցենզավորման իրավասությունների կրկնության բացառման անհրաժեշտությամբ։

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N895 որոշման 2-րդ կետով սահմանված է, որ պարզ ընթացակարգով լիցենզիաները տրամադրող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը։ ՝Լիցենզավորման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 2-րդ բաժնի 1-ին կետով նշված գործունեության (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7102 10 000, 7102 21 000, 7102 31 000 ծածկագրին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում) լիցենզավորման համար նախատեսված է պարզ ընթացակարգ, սակայն միևնույն ժամանակ նույն որոշման 1-ն կետի ՝ժե)՝ ենթակետով լիցենզավորող մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման) նախարարությունը։ Կարգավորման առարկան Է՝ պարզ ընթացակարգով լիցենզավորման գործընթացի հետ կապված լիազորությունների կրկնության վերացման հարցը։

Իրավական ակտի կիրարկման արդյունքում ակնկալվում է, որ իրավական ակտի ընդունմամբ կբացառվի իրավասությունների կրկնությունը։

Սույն որոշման նախագիծը մշակվել է օգտվելով հետևյալ իրավական ակտերից՝

1. «Իրավական ակտերի մասինե ՀՀ օրենք

2. «Լիցենզավորման մասինե ՀՀ օրենք

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի սեպտեմբերի 24-ի ՝Լիցենզավորման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին՝ N895 որոշում